Դատավորների կարգապահական պատասխանատվության մասով հաշվետվություն

Կարգապահական վարույթ

1. ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով.

2017 թվականի ընթացքում ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցվել է մեկ կարգապահական վարույթ՝ նյութական և դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքերով:

2016 թվականի ընթացքում ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցվել է 3 կարգապահական վարույթ, որից 2-ը՝ դատավորի վարքագծի կանոնի կոպիտ խախտում թույլ տալու հիմքով, մեկ դեպքում՝ դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքով: Հարուցված կարգապահական վարույթներից 1-ը կարճվել է վարույթ հարուցողի կողմից:

2. ՀՀ արդարադատության նախարար.

2017 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի կողմից հարուցվել է մեկ կարգապահական վարույթ՝ նյութական և դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքերով:

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի կողմից հարուցվել է 5 կարգապահական վարույթ, որից 3-ը՝ նյութական և դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքերով, 2-ը՝ դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքով: Հարուցված կարգապահական վարույթներից 2-ը կարճվել է վարույթ հարուցողի կողմից:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2017 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության խորհուրդը քննել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին 2 միջնորդություն, որից մեկը բերվել է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, իսկ մյուսը՝ ՀՀ արդարադատության նախարարի: Արդյունքում՝ 1 դատավորի հայտարարվել է նկատողություն:

Միաժամանակ մեկ կարգապահական գործ, որի հիմքում ընկած է եղել ՀՀ արդարադատության նախարարի կողմից հարուցված կարգապահական վարույթը, կարճվել է:

Նշված ժամանակահատվածում կարգապահական պատասխանատվության կրկնակիության դեպքեր չեն արձանագրվել:

2016 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության խորհուրդը քննել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին 4

միջնորդություն, որից 2-ը բերվել է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, իսկ 2-ը՝ ՀՀ արդարադատության նախարարի: Արդյունքում՝ 1 դատավորի հայտարարվել է նախազգուշացում:

Միաժամանակ 3 կարգապահական գործ, որոնցից մեկի հիմքում ընկած է եղել ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի, իսկ 2-ի հիմքում՝ ՀՀ արդարադատության նախարարի կողմից հարուցված կարգապահական վարույթները, կարճվել է (2-ը կարճվել է՝ բավարարվելով հարցի քննարկմամբ):

Նշված ժամանակահատվածում կարգապահական պատասխանատվության կրկնակիության դեպքեր չեն արձանագրվել: